ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԵՐԵՎԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ կամ Հիմնադրամ) 2016 թվականի գործունեության հաշվետվությունն է: Տարին շրջադարձային դարձավ նախ և առաջ ՈԱԱԿ-ի միջազգային ճանաչման, ինչպես նաև ներքին և արտաքին գործունեության ոլորտներում Հիմնադրամի ձեռքբերումների տեսանկյունից:

2016-թվականին ՈԱԱԿ-ն իր շահակիցների հետ ավարտեց 2010-2015թթ. Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների ամփոփումը և նոր՝ 2016-2020թթ. ծրագրի մշակման աշխատանքները: Նախկին ծրագրի իրականացման արդյունքների և նոր ռազմավարական նպատակների և խնդիրների քննարկումներ են կազմակերպվել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի, Հավատարմագրման հանձնաժողովի, աշխատակազմի, ինչպես նաև բուհերի ներկայացուցիչների և այլ արտաքին շահակիցների հետ: Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրում կարևորվել են ՈԱԱԿ-ի գործունեության 3 հիմնական ուղղություններ՝ մասնագիտական կրթության որակի բարելավում, Հիմնադրամի վստահելիություն և միջազգային ճանաչվածություն:

Հավատարմագրման հանձնաժողովի 2016թ. կայացված որոշումներով ավարտվեց հավատարմագրման առաջին շրջափուլը շուրջ երկու տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, որոնցում սովորում է հանրապետության ուսանողության մոտ 89%-ը: 2011թ. հաստատված Հավատարմագրման կարգին և Որակի ապահովման Եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համահունչ «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին» համապատասխան արդեն հավատարմագրվել են, որոշումների կայացման փուլում են կամ հավատարմագրման գործընթացում են բոլոր պետական (բացառությամբ Ռազմական ուսումնական հաստատությունների, որոնց գործընթացը պայմանագրերի կազմման փուլում է) բարձրագույն ուսումնական հաստատությունները և համեմատաբար մեծաքանակ ուսանողներ ունեցող ոչ պետական հաստատությունները: Սկսվել է երկրորդ շրջափուլը պայմանական հավատարմագրում ստացած հաստատությունների համար:

Մասնագիտական կրթության ոլորտի ամբողջական վերլուծությունը, հավատարմագրում անցած բուհերի և նրանց որակի ներքին ապահովման համակարգերի մշտադիտարկումները ցույց են տալիս, որ բուհերում որակի ներքին ապահովման համակարգերը ներդրված են, սակայն դասախոսական կազմի ներգրավվածության և որակի մշակույթի տարածման խնդիրներ կան: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները դեռևս ամբողջապես ընդգրկված չեն որակի ապահովման գործընթացներում: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման ներքին համակարգերի ներդրման գործընթացն սկսել է պետական 12 տարածաշրջանային և ՈԱԱԿ-ում 2016 թ. վերապատրաստում անցած 32 այլ քոլեջներից: Այդ խնդիրների հաղթահարմանն են ուղղված եղել շահակիցների հետ ՈԱԱԿ-ի համագործակցությունը և նրանց տրամադրվող աջակցությունը հաշվետու տարում: Այդ նպատակով ՈԱԱԿ-ն օգտագործել է իր ներուժը և միջազգային ծրագրերի ընձեռնած հնարավորություններն անձնակազմի, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) ներկայացուցիչների վերապատրաստումների համար:

ՈԱԱԿ-ը շարունակում է իրականացնել հետևողական քայլեր՝ ամրապնդելու իր դիրքը երկրում և ճանաչումը եվրոպական կրթական տարածքում: Իրականացնելով միջազգայնացման

իր ռազմավարական նպատակը՝ ՈԱԱԿ-ը 2016թ. անցել է արտաքին գնահատում Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) փորձագիտական խմբի կողմից և դարձել այդ ասոցիացիայի լիիրավ անդամը: 2016թ. ՈԱԱԿ-ը դարձել է ԱՄՆ Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի Որակի միջազգային խմբի անդամ, և, որպես միջազգայնորեն հավատարմագրված կրթության որակի արտաքին ապահովման կառույց, քայլեր է իրականացնում Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) գրանցվելու համար:

Սույն փաստաթղթում ներկայացվում են հաշվետու տարում կատարված աշխատանքները՝ ըստ ՈԱԱԿ-ի գործունեության 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրի 3 հիմնական ուղղությունների նպատակների և խնդիրների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
1.ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 5
Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում 6
Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում 6
Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում 7
Ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպում 9
Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհերի ծրագրեր 9
Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ 10
Մշտադիտարման իրականացում 11
2.ՈԱԱԿ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ .. 15
Մարդկային ռեսուրսների կառավարում 20
Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարում 22
ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների պարբերական գնահատում 23
Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում 23
3.ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ **24**
4.ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ **27**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով 2010-2015թթ. անցումային ժամանակաշրջանի Հիմնադրամի Ռազմավարական ծրագրի արդյունքները՝ կարելի է փաստել, որ ՈԱԱԿ-ը, իրականացնելով իր առաքելությունը մասնագիտական կրթության որակի հավաստման ոլորտում, հասել է իր հիմնական նպատակներին. ձևավորվել են Հիմնադրամի, որպես անկախ և մասնագիտացված կառույց, կարողությունները, երկրում ստեղծվել է միջազգային չափորոշիչներին համապատասխան մասնագիտական կրթության որակի ապահովման արտաքին համակարգ, մասնագիտական ուսումնական հաստատություններում ներդրվել է որակի մշակույթ, ձևավորվել է որակի ապահովման փորձագետների բազա, ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ Հիմնադրամի միջազգային ճանաչման համար: Շահակիցների կողմից տրամադրված հետադարձ կապի հիման վրա կարելի է եզրակացնել, որ ՈԱԱԿ-ի գործունեությունը զգալի ազդեցություն ունի մասնագիտական կրթության համակարգի զարգացման միտումների վրա, ինչպես նաև վստահություն է ներշնչում բոլոր շահակիցներին:

Ելնելով իր տեսլականից, նոր մարտահրավերներից և կրթության ոլորտի ամբողջական ուսումնասիրության արդյունքում բացահայտված շահակիցների կարիքներից՝ ՈԱԱԿ-ն իր 2016-20 թ.թ. Ռազմավարական ծրագրում սահմանել է գործունեության երեք հիմնական նպատակներ.

1. Հիմնադրամի գործունեությամբ զգալիորեն նպաստել մասնագիտական կրթության որակի ապահովմանը,
2. Լինել վստահելի կազմակերպություն բոլոր շահակիցների համար,
3. Դառնալ միջազգայնորեն ճանաչված կազմակերպություն:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ն աշխատել է այդ երեք հիմնական նպատակներին ուղղված խնդիրների լուծման ուղղությամբ:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտ: ՈԱԱԿ-ի համակարգված աշխատանքի շնորհիվ ՀՀ մասնագիտական կրթության համակարգում կատարվել են զգալի փոփոխություններ: ՈԱԱԿ-ի ջանքերով ներդրված մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման գործող համակարգը ոլորտում բարեփոխումների իրականացման հիմնական մեխանիզմն է: Ուսումնական հաստատությունների մեծ մասում ներդրված են որակի ապահովման ներքին մեխանիզմները, և հիմա ձեռնամուխ են եղել դրանց գնահատմանը և զարգացմանը:

Հավատարմագրման առաջին շրջափուլի հիմնական արդյունքները ՈԱԱԿ-ը դիտարկում է որպես բուհերի պատրաստակամություն՝ բարելավման պարտավորություն վերցնելու և կրթական համակարգում բարեփոխումների իրականացումն ապահովելու համար: Այսպիսի մոտեցումը մասնագիտական կրթության համակարգի որակի ապահովման տիրույթում փուլային, կայուն և դրական տեղաշարժ կարող է ապահովել:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջափուլի ավարտից հետո կարևոր է անցումը մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրմանը, որի իրականացման համար, որպես նախապատրաստական փուլ, ՈԱԱԿ-ը դիտարկում է ուսումնական պրոցեսի կազմակերպման խմբային աուդիտը հարակից կրթական ծրագրերի համար: Հավատարմագրում անցած ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել խմբային աուդիտի սկզբունքերի, չափանիշների և ընթացակարգի շուրջ:

ՈԱԱԿ-ի նկատմամբ վստահության աճին ուղղված գործունեություն: Առաջնորդվելով Հիմնադրամի ռազմավարական գերակայություններով, միջազգային փորձագետների խորհրդատվությունների և շահակիցների կարիքների վերլուծության վրա հիման վրա կազմված ՈԱԱԿ-ի բարելավման պլանով՝ ՈԱԱԿ-ը, որպես մասնագիտական կրթության ոլորտում որակի արտաքին ապահովում իրականացնող կառույց, գնում է զարգացման ուղղությամբ: ՈԱԱԿ-ն

իրականացնում է իր առաքելությունը մասնագիտական կրթության որակի հավաստման ոլորտում՝ բավարարելով շահակիցների պահանջներն ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացման միջոցով: Առկա են անհրաժեշտ ռեսուրսները՝ կազմակերպելու շահակիցների կողմից ընդունելի օբյեկտիվ և անկախ գնահատումներ: Միջազգային փորձագետների գնահատմամբ ՈԱԱԿ-ն արդյունավետ և թափանցիկ գործող, դինամիկ զարգացող կառույց է: Հիմնադրամի որակի ներքին ապահովման համակարգն ապահովում է շահակիցների հանդեպ և միջազգային ասպարեզում ՈԱԱԿ-ի գործընթացների հաշվետվողականությունը, կենտրոնի կողմից իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքների թափանցիկությունը, ինչպես նաև ցուցադրում է՝ որքանով են ձեռք բերված արդյունքները համապատասխանում կազմակերպության նախանշված նպատակներին և նպաստում գործունեության բարելավմանը:

Միջազգայնացմանն ուղղված գործունեություն: Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի փորձագիտական խմբի կողմից ՈԱԱԿ-ի գործունեության բարձր գնահատականը միջազգային մակարդակում տարբեր նախաձեռնություններին և միջոցառումներին Հիմնադրամի ակտիվ մասնակցության արդյունք է: Միջազգային փորձի ընկալման, տեղայնացման և միջազգային ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ Հիմնադրամի ձեռքբերումները նոր հնարավորություններ են ընձեռնում ինչպես ՈԱԱԿ-ի գործունեության տարածման, այնպես էլ առանձին ուսումնական հաստատությունների և մասնագետների համար:

Ստորև մանրամասն ներկայացվում են ՈԱԱԿ-ի ձեռքբերումները համաձայն 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրի առաջին տարվա համար նախատեսված աշխատանքների՝ ըստ գործունեության հիմնական նպատակների:

1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Կառավարության 2011 թվականի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի» համաձայն՝ ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման երկու գործընթացներով՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում և մասնագիտության կրթական ծրագրի (ծրագրային) հավատարմագրում: Պարբերաբար իրականացող անկախ հավատարմագրումների միջոցով ՈԱԱԿ-ը հավաստում է ՀՀ-ում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը և մատուցվող կրթական ծառայությունների որակը՝ դրանով իսկ ապահովելով հասարակության վստահությունը կրթական համակարգի նկատմամբ: ՀՀ մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման գործող համակարգը ներկայումս ոլորտում բարեփոխումների իրականացման հիմնական մեխանիզմն է:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը 2016թ.-ին մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման ուղղությամբ ըստ ռազմավարական նպատակների իրականացրել է հետևյալ գործունեությունը.

Նպատակ 1.1. ՄՈՒՀ-երի և դրանցում իրականացվող կրթական ծրագրերի՝ Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումները հիմք են որակի հավաստման և բարելավման համար:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր.

- ապահովել փորձաքննությունների իրականացումը հանրության շահերն արտացոլող չափանիշների և չափորոշիչների հիման վրա,

- կազմակերպել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներ՝ ապահովելով ուսանողների գերակշիռ մասի շահերը,
- իրականացնել այնպիսի փորձաքննություններ, որ մուտքերը որակի բարելավման իրենց գործողություններն իրականացնեն այդ գնահատումների հիման վրա՝ գիտակցելով դրանց օգտակարությունն իրենց համար:

ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները պարբերաբար գնահատվում են ուսումնական հաստատություններում ինքնավերլուծություն իրականացրած աշխատակազմի և հավատարմագրման փորձագիտական խմբերում ընդգրկված մասնագետների կողմից: Դրանք քննարկվել են ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների հետ՝ Որակի ապահովման եվրոպական ցանցին անդամակցելու փորձնական այցի և փորձագիտական այցի նախապատրաստական աշխատանքների, ինչպես նաև Հիմնադրամի ինքնավերլուծության ընթացքում: Առանձին քննարկումներ են կազմակերպվել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների և աշխատակիցների հետ: ՄՈՒՀ-երի հետ տարվել են չափանիշների կիրառության պարզաբանման աշխատանքներ, և հավատարմագրման բոլոր գործընթացներում կիրառվել են գործող չափանիշները և հաստատված ընթացակարգերը:

Ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստման նպատակով ՈԱԱԿ-ի նախաձեռնած կլաստերային աուդիտի չափորոշիչները քննարկվել են ՄՈՒՀ-երի տարբեր օղակների ներկայացուցիչների, ուսանողների նաև ԿԳՆ հետ:

Մասնագիտական առանձնահատկություններ ունեցող ՄՈՒՀ-երի նկատմամբ հավատարմագրման չափանիշների կիրառման փորձը և ՄՈՒՀ-երի հետ տարված աշխատանքները ցույց են տալիս, որ չափանիշները բավական ունիվերսալ են և կիրառելի:

Շահակիցների հետ քննարկումները ցույց են տալիս, որ շահակիցները հիմնականում բավարարված են հավատարմագրման չափանիշներով:

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում

2015 թվականի փետրվարից սկսած ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը կայացնում է որոշումներ հավատարմագրման գործընթացների վերաբերյալ՝ փակելով հավատարմագրման առաջին փուլը: 2016 թվականին Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է որոշումներ 3 բուհերի վերաբերյալ, որոնց շնորհվել է հավատարմագրում 4 տարի ժամկետով:

Որոշումները կայացվել են հետևյալ բուհերի վերաբերյալ՝

	Բուհի անվանումը	Շնորհված հավատարմագրումը
1	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
2	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
3	Գյումրու Մ.Նալբանդյանի անվ. պետական մարկավարժական իրստիտուտ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում

ՈԱԱԿ-ը վերոնշյալ երեք բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումների մասին գրառումներ է կատարել Ինստիտուցիոնալ

հավատարմագրման պետական գրանցամատյանում (տես ՈԱԱԿ-ի http://www.anqa.am հասցեով կայքէջը):

Ներկայացրած փաստաթղթերի հիման վրա «Ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական գրանցամատյանում» գրառում է կատարվել նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին 5 տարի ժամկետով շնորհված հավատարմագրման վերաբերյալ, որն իրականացվել է Իսպանիայի որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալության կողմից:

«Մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման պետական գրանցամատյանում» ՈԱԱԿ-ի կողմից գրառումներ են կատարվել Ինֆորմատիկական կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի (EQANIE) և Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIIN) կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի հետևյալ մասնագիտության կրթական ծրագրերին համատեղ շնորհված հավատարմագրումների վերաբերյալ.

ա) Տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգություն (բակալավրիատ, առկա ուսուցում) – 5 տարի ժամկետով,
բ) Տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգություն (մագիստրատուրա, առկա ուսուցում) – 5 տարի ժամկետով,
գ) Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա (բակալավրիատ, առկա ուսուցում) – 5 տարի ժամկետով,
դ) Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա (մագիստրատուրա, առկա ուսուցում) – 5 տարի ժամկետով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում

2016թ.-ին իրականացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ 5 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, Գավառի պետական համալսարանում, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում:

ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան՝ ձևավորվել և ուսումնական հաստատությունների հետ համաձայնեցվել են փորձագիտական խմբերը: Յուրաքանչյուր փորձագիտական խմբում ընդգրկվել են 3 տեղացի, 1 կամ 2 միջազգային փորձագետ և 1 ուսանող: Որպես միջազգային փորձագետներ ընտրվել են՝

— **Ազիր Ալուա** – փիլ. դոկտոր (PhD) Համակարգչային գիտությունների ոլորտում, Հարավ-Արևելյան Եվրոպական համալսարանի պրոֆեսոր, Մակեդոնիայի վարչապետի խորհրդական գիտության, բարձրագույն կրթության և ինֆորմացիոն-տեխնոլոգիաների գծով (ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն),
— **Յոհան Կլոետ** – Եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցիացիայի նախագահ, Անտվերպենի Թոմաս Մոր համալսարանի նախկին փոխտնօրեն, Որակի ապահովման բելգիական VLHORA կազմակերպության ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի անդամ (Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ),
— **Պատրիկ Դեյվիդ Գրեյ** - Լոնդոնի Մետրոպոլիտան համալսարանի Հասարակական և հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հասարակական մասնագիտությունների ամբիոնի վարիչ (Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ),
— **Մարգարեթ Բյուլոու Շրամ** - Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր (Գավառի պետական համալսարան),

— **Լևան Խեթագուրի** - Թատերագիտության դիպլոմավորված մասնագետ, արտասահմանյան թատերագիտության թեկ. թատրոնի ոլորտում, Կովկասյան բազային հիմնադրամի նախագահ, Վրաստան (Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ),
— **Յուրի Մգեբրիշվիլի** - Արվեստների և մշակույթի հետազոտության ինստիտուտի դասախոս, մշակույթի կառավարման, քաղաքականության հետազոտական կենտրոնի ղեկավար, Մշակույթի կառավարման ծրագրերի մագիստրոս, Իլյայի պետական համալսարանի դասախոս, գիտ. թեկ. մշակույթի կառավարման ոլորտում, Վրաստան (Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ)

Ըստ հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի և հաստատված ժամանակացույցի՝

1) իրականացվել են ինքնավերլուծությունների ու կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն և փորձագիտական այցեր ուսումնական հաստատություններ;
2) սահմանված ժամկետներում կազմվել են փորձագիտական խմբերի նախնական զեկույցները և տրամադրվել բուհերին: Բուհերի առարկությունները հաշվի առնելով՝ լրամշակվել են վերջնական զեկույցները;
3) փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը մշակել են թերությունների վերացման ծրագիր, որոնք գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից, և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

2016թ.-ին ևս 3 ուսումնական հաստատություններ՝

- ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան,
- Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան,
- Հյուսիսային համալսարանը,

դիմում-հայտ են ներկայացրել ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու նպատակով, գործընթացները կավարտվեն 2017թ.-ին:

Տեմպուսի TNE QA ծրագրի շրջանակներում փորձանական արտաքին գնահատում են անցել 3 տրանսազգային ուսումնական հաստատություններ՝

- Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը,
- Հայաստանում ամերիկյան համալսարանը,
- Հայաստանում ֆրանսիական համալսարանը:

Մինչև գնահատման գործընթացներն իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ. մշակվել է ինքնավերլուծության ձևաչափը տրանսազգային հաստատությունների համար, բուհերն իրականացրել են ինքնավերլուծություն, հաստատվել են այցերի ժամանակացույցերը, ձևավորվել են փորձագիտական խմբերը: Փորձագիտական այցերը տեղի են ունեցել 2017թ. մարտ ամսին: Ներկայումս խմբերի կողմից պատրաստվում են գնահատման զեկույցները:

Տեմպուսի GOVERN ծրագրի շրջանակներում փորձնական արտաքին գնահատում են անցնում՝

- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը,
- Հյուսիսային համալսարանը,
- Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը,
- Վանաձորի պետական համալսարանը
- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը,
- ՀՀ պետական կառավարման ակադեմիան,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարանը,

– Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը:

2016 թվականին Տեմպուսի VERITAS ծրագրի շրջանակներում մշակվել է SWOT վերլուծության իրականացման ձևաչափը, որի հիման վրա գործընկեր համալսարաններն իրականացրել են վերլուծություններ և ստացել համապատասխան արձագանք ՈԱԱԿ-ի կողմից՝ ըստ նախապես կազմված ժամանակացույցի: Ծրագրի շրջանակներում մշակվել է նաև ինքնավերլուծության ձևաչափը՝ ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշ/չափորոշիչների հիման վրա, որի համաձայն ՀՀ գործընկեր բուհերը (տասնմեկ բուհ) 2017 թ. անցնելու են արտաքին գնահատում:

Տեմպուսի PICASA ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը հանդես է եկել կրթական ծրագրերի միջազգայնացմանը և դրանց որակի ապահովմանը նվիրված առաջարկություններով, որոնք հաջորդ տարի կամփոփվեն և կներկայացվեն ՀՀ Կառավարությանը: 2017 թվականին նախատեսվում է նաև իրականացնել ծրագրի գործընկեր բուհերի (ՀՀ, Վրաստան, Բելառուս, Ուկրաինա) արտաքին գնահատում՝ միջազգայնացման տեսանկյունից:

Ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպում

2016 թվականին TEMPUS-ի ALIGN ծրագրի շրջանակներում եվրոպական առաջավոր բուհերի փորձագետների հետ համատեղ կազմակերպվել է ծրագրային փորձաքննություն Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում և Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Արտաքին գնահատում են անցել ԵԳՊԱ-ում «Դիզայն» և «Համակարգչային գրաֆիկա», ԵՊԲՀ-ում «Ընդհանուր բժշկություն» և «Դեղագործություն», ԵՊԼՀ-ում՝ «Կրթության կառավարում» և «Թարգմանչական գործ» մասնագիտությունների կրթական ծրագրերը:

Ծրագրի մասնակից բուհերը եվրոպացի գործընկերների և ՈԱԱԿ-ի հետ համագործակցությամբ վերանայել են դիտարկվող մասնագիտությունների կրթական ծրագրերը, իրականացրել ինքնավերլուծություն: Արտաքին գնահատումներից հետո մասնագետները տրամադրել են խորհրդատվություններ բարելավման ուղղությամբ:

Ծրագրային հավատարմագրման կամավորության և ուսումնական հաստատությունների ֆինանսական սուղ ռեսուրսների պայմաններում կարճ ժամանակամիջոցում մասնագիտական կրթության որակի բարելավմանը կարող է նպաստել կրթական ծրագրերի խմբային աուդիտը, որը կխթանի մասնագիտությունների խոշորացումը, կապահովի հավատարմագրման ծախսերի կրճատումը: Խմբային /կլաստերային/ աուդիտը ՈԱԱԿ-ը դիտարկում է ծրագրային հավատարմագրման նախապատրաստական փուլ, որը պետք է ուղղված լինի ուսումնական պրոցեսի կազմակերպման գնահատմանը: Հավատարմագրում անցած ուսումնական հաստատությունների, ուսանողների և ԿԳՆ ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել խմբային աուդիտի սկզբունքերի, չափանիշների և ընթացակարգի շուրջ:

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհերի ծրագրեր

ՀՀ կառավարության 11.12.2014 N 1397–Ն որոշմամբ «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի համաձայն հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում, ուսումնական հաստատությունն ՈԱԱԿ-ին է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների՝ հաստատության կողմից հաստատված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը:

2016-ին հավատարմագրում ստացած բոլոր ուսումնական հաստատությունները ՈԱԱԿ են ներկայացրել թերությունների վերացման գործողությունների ծրագրերը և ժամանակացույցերը: Բուհերը հավատարմագրման որոշումից առաջ ներկայացրած իրենց պլանները վերանայել են ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա:

Հավատարմագրման կարգի պահանջներին համապատասխան՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման մասին:

2016թ. հավատարմագրումից հետո 6 ամիսների ընթացքում իրականացված գործողությունների վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացրել Եվրասիա միջազգային համալսարանը և Մխիթար Գոշ ռուս-հայկական համալսարանը: Հաշվետվություններն ուսումնասիրվել են համակարգողների կողմից, և եզրակացություններ են ուղարկվել բուհերին և Հավատարմագրման հանձնաժողովին:

Պայմանական հավատարմագրում ստացած Հյուսիսային համալսարանը վերջին մեկ տարում իրականացված գործողությունների մասին հաշվետվություններ չի ներկայացրել:

Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

«ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի» համաձայն հավատարմագրման ենթակա են նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները և նրանց կողմից իրականացվող կրթական ծրագրերը: Կառավարության կողմից հավանության արժանացած «Մասնագիտական կրթության բարեփոխումների 2012-2016թթ. ծրագրում» կարևորված են նաև միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումները, այդ թվում կրթության որակի ապահովումը:

2016թ. էական տեղաշարժեր կատարվեցին նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ աշխատանքների ոլորտում: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը հանդիպումներ է ունեցել ՄԿՈ ոլորտի շահակիցների հետ՝ մասնակցելով տարաբնույթ աշխատաժողովների, կլոր-սեղան քննարկումների, անհատական հանդիպումների՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվություն, օժանդակություն և խորհրդատվություն շահակիցներին: Կազմակերպվել են հանդիպումներ քոլեջների տնօրենների և որակի ապահովման պատասխանատուների հետ: ՄԿՈ ոլորտի ներկայացուցիչները մասնակից են դարձել բոլոր քննարկումներին և համաժողովներին: 2016թ. ՈԱԱԿ-ի կազմակերպած վերապատրաստումների արդյունքում որակի ապահովման գործընթացում ընդգրկվեց քոլեջների ավելի քան 50%-ը:

2016թ. ՈԱԱԿ-ը միացել է ԵՄ բյուջետային աջակցության «Better Qualifications for Better Jobs» համաձայնագրին, որով հանձն է առել նպաստել ագրարային ուղղվածություն ունեցող ՄԿՈ հաստատությունների որակի ներքին համակարգերի ձևավորմանը և վերջիններիս արտաքին գնահատմանը:

ՈԱԱԿ-ը մասնակցել է նաև «Թուրինի գործընթաց 2016» գերակայությունների քննարկմանը և վավերացմանը: Հիմնադրամը քայլեր է ձեռնարկել «ՄԿՈ որակի ապահովման ֆորում»-ին /Forum for Quality Assurance in VET/ միանալու ուղղությամբ, որը ձևավորման փուլում է, և իր գործունեությունը կմեկնարկի 2017թ.-ին:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը դիմել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությանը (GIZ)՝ ՄԿՈ ոլորտում հատուկ պայմաններով միջազգային փորձագետ տրամադրելու նպատակով՝ լրացնելով համապատասխան հայտադիմում: Համանման հայցով ՈԱԱԿ-ը դիմել է նաև ԱՄՆ Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակին:

Վերապատրաստումներ անցած 12 տարածաշրջանային պետական քոլեջների որակի ներքին ապահովման պատասխանատուներն 2016թ.-ին իրականացրել են իրենց հաստատությունների փորձնական ինքնավերլուծությունները՝ քոլեջների համար լրամշակված ձևաչափով,

նախանշված չափանիշների ուղղությամբ, որի արդյունքում մեկնարկել է փորձնական փոխգնահատման գործընթացը:

Մշտադիտարման իրականացում

2016 թվականի ընթացքում ՈԱԱԿ-ը մշտադիտարկումներ է իրականացրել ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատություններում՝ հետևելու որակի ներքին ապահովման համակարգերի գործունեությանը և փորձագիտական զեկույցում մատնանշված թերությունների վերացման աշխատանքների ընթացքին, դրանց համապատասխանությանը սահմանված ժամանակացույցին:

Մշտադիտարկումների նպատակն էր հավաստիանալ, որ հավատարմագրում ստացած բուհերը կատարում են ստանձնած պարտավորությունները կրթության որակի շարունակական բարելավման ապահովման առումով:

Մշտադիտարկման նպատակով այցեր են եղել հետևյալ բուհերում՝

- Երևանի պետական համալսարան,
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
- Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան,
- Հյուսիսային համալսարան,
- Երևանի «Գլաձոր» համալսարան,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան,
- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
- ՀՀ պետական կառավարման ակադեմիա:

Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմվել են հաշվետվություններ:

Հավատարմագրման հանձնաժողովի 2016թ. կայացված որոշումներով ավարտվեց հավատարմագրման առաջին շրջափուլը շուրջ երկու տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, որոնցում սովորում են հանրապետության ուսանողության մոտ 89%-ը: Պետական հաստատությունների 100%-ը կամ արդեն անցել են հավատարմագրում, կամ ընդգրկված են գործընթացում: Մասնավոր բուհերի միայն 20%-ն է մասնակցել հավատարմագրմանը:

Շահակիցներն անմիջականորեն և ակտիվորեն մասնակցել են խմբային ծրագրային աուդիտի մոտեցումների ձևավորման գործընթացին:

Էական տեղաշարժեր կան ՄՄԿՈՒ ոլորտի ուսումնական հաստատություններում, որպես ձևավորվում են որակի կենտրոններ կամ նշանակվում պատասխանատուներ, իրականացվում են ինքնավերլուծություններ և փոխադարձ գնահատումներ:

Բուհերում իրականացված մշտադիտարկումները ցույց են տալիս, որ նրանք հետևում են փորձագետների խորհրդատվությունների հիման վրա կառուցված բարելավման պլանների իրականացմանը:

Նպատակ 1.2. ՄՈՒՀ-երին տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ:

Այս նպատակին ուղղված՝ հաշվետու տարում նախատեսված էր՝

- Հիմնադրամի նախաձեռնությամբ որակի ապահովման մեթոդաբանության վերաբերյալ պարբերական խորհրդատվությունների տրամադրում,

– ՄՈՒՀ-երի նախաձեռնությամբ ՈԱ խնդիրների հաղթահարմանն ուղղված թիրախային խորհրդատվությունների տրամադրում:

Հաշվետու տարում հիմնադրամի նախաձեռնությամբ վերապատրաստման խմբեր են ձևավորվել և ՄՈՒՀ-երի աշխատակիցների համար կազմակերպվել են ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ: Ընդհանուր առմամբ կազմավորվել է վերապատրաստման 8 խումբ: Դասընթացները կազմակերպվել են 2 թիրախային խմբերի համար. ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած բուհերի համար ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով, ինստիտուցիոնալ հավատարմագրմանը նախապատրաստվելու համար գործընթացը չանցած բուհերի և քոլեջների համար: Ընդհանուր առմամբ 2016 թ. վերապատրաստումներին մասնակցել է 104 հոգի, ընդ որում բուհերից 3 խումբ՝ 40 հոգի, քոլեջներից 5 խումբ՝ 62 հոգի: Մեկ հոգի եղել է ՀՀ ՊՆ աշխատակից, մեկը՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամից: Վերապատրաստվողների 73%-ը եղել են կանայք, 27 %-ը՝ տղամարդիկ (ընդ որում տղամարդկանց համեմատաբար բարձր տոկոսն ապահովվել է ռազամական ուսումնական հաստատությունների (ՌՈՒՀ-երի) շնորհիվ, որոնց վերապատրաստվողների կազմում տղամարդիկ կազմել են 75%): 2016թ. վերապատրաստումների արդյունքում որակի ապահովման գործընթացում ընդգրկվել է քոլեջների ավելի քան 50%-ը:

Վերապատրաստումների գնահատման քանակական տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՈԱԱԿ-ում վերապատրաստում անցած ՄՈՒՀ-երի աշխատակիցների ավելի քան 90% բավարարված է եղել ՈԱԱԿ-ում անցկացվող վերապատրաստումներից: Անհրաժեշտ է նշել, որ շահակիցների որակական գնահատումների հիման վրա ՈԱԱԿ-ում կազմակերպվող վերապատրաստման ծրագիրն անընդհատ բարելավվում է :

ՄՈՒՀ-երի նախաձեռնությամբ ՈԱ խնդիրների հաղթահարմանն ուղղված թիրախային խորհրդատվությունների տրամադրումը ՄՈՒՀ-երի աշխատակիցներին մշտական բնույթ է կրում: Շահակիցներին խորհրդատվություն է տրամադրվել հիմնականում հետևյալ հիմնահարցերի ուղղությամբ.

- միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին՝ որակի ապահովման ներքին համակարգի ներդրման, կառույցի ստեղծման, աշխատանքների պլանավորման, շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմների ստեղծման, ինստիտուցիոնալ ինքնավերլուծության իրականացման, չափորոշիչների մեկնաբանման ուղղությամբ,
- ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերին՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի կազմման, աշխատանքների պլանավորման, կատարողականի ցուցիչների մշակման, իրականացվող աշխատանքների մշտադիտարկման կազմակերպման, ՄԿԾ-երի վերանայման, ուսանողի գնահատման մեթոդաբանության վերանայման ուղղությամբ:

Խորհրդատվություն տրամադելու նպատակով այցեր են կատարվել ՀՀ ոստիկանության կրթահամալիր, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Կազմակերպվել է մեկ հանդիպում քոլեջների տնօրենների և որակի ապահովման պատասխանատուների հետ:

Բոլոր վերապատրաստումներից հետո անցկացվել է հարցում, որի համաձայն մասնակիցների ակնկալիքներն արդարացել են 88 տոկոսով:

Ինչ վերաբերում է մասնակցության աստիճանին, եթե նախկինում ՈԱ գործընթացներին մասնակցել են միայն 12 տարածաշրջանային պետական քոլեջները, ապա 2016թ. գործընթացում ընդգրկվեցին ևս 32 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, այսինքն՝ հաստատությունների ավելի քան 50 տոկոսը:

Վերապատրաստումներից հետո շահակիցների հետ անցկացված հանդիպումները ցույց են տվել, որ ներգրավված քոլեջների մի մասը նախապատրաստվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման, սկսել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Բուհերում սկսվել է ՄԿԾ-ների վերանայման գործընթաց:

Նպատակ 1.3. Հիմնադրամն իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վերհանելու մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման հիմնախնդիրները և լավագույն փորձը:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- պարբերաբար իրականացնել և հրապարակել թեմատիկ ուսումնասիրություններ,
- փորձաքննությունների հիման վրա հրապարակել ամփոփ տեղեկություններ և վերլուծություններ,
- կազմակերպել ՄՈՒՀ-երի միջև որակի ապահովմանն առնչվող փորձի փոխանակում:

2015թ.-ին, նախապես հստակեցված ուսումնասիրության ուղղություններով և ընտրված մեթոդներով, իրականացվել է **ՀՀ մասնագիտական կրթական համակարգի երկրորդ համակարգային վերլուծությունը**: Հետազոտության հիմնական նպատակն է եղել ուսումնասիրել, թե՝

- հավատարմագրման գործընթացը և որակի ապահովման հաստատված գործընթացներն ինչպիսի ազդեցություն են ունեցել ՀՀ մասնագիտական կրթական համակարգում տեղի ունեցող զարգացումների վրա,
- ինչպիսին է ՄՈՒՀ-երում որակի ապահովման համակարգի առկա վիճակը և որոնք են հիմնական խնդիրները ինստիտուցիոնալ առումով:

Հարցմանը մասնակցել են ՀՀ տարածքում գործող բոլոր պետական և ոչ պետական բուհերը, 12 տարածաշրջանային քոլեջներն ու ՈԱԱԿ-ի գործընթացներում ներգրավված մյուս ՄՄՈՒՀ-ները: Ստացված տվյալներն ամբողջացնելու նպատակով իրականացվել են ֆոկուս խմբային հանդիպումներ տարբեր շահակիցների հետ:

2016թ. իրականացվել է արդյունքների համեմատություն 2011թ.-ին ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված առաջին համակարգային վերլուծության հետ՝ տեսնելու զարգացման միտումները և գնահատելու համակարգային փոփոխությունները: Վերլուծության արդյունքները հիմք են հանդիսացել ՈԱԱԿ-ի նոր Ռազմավարական ծրագրի մշակման համար, ինչպես նաև տեղ են գտել ՈԱԱԿ-ի ինքնավերլուծության մեջ: ՀՀ մասնագիտական կրթական համակարգի երկրորդ համակարգային վերլուծությունը հասանելի է ՈԱԱԿ-ի կայքէջի «Հրապարակումներ» բաժնում:

Հավատարմագրման գործընթացի արդյունավետության ուսումնասիրությունից զատ՝ իրականացվել են հարցումներ և այլ ուսումնասիրություններ՝ շահակիցների կարիքները, ոլորտի խնդիրները, լավագույն փորձը բացահայտելու նպատակով:

Հրապարակումների շարքում է բարձրագույն կրթության միջազգայնացման վրա հավատարմագրման գործընթացի ազդեցության ուսումնասիրությունը: Եվս երկու ուսումնասիրությունների արդյունքներ կհրապարակվեն 2017թ.:

ՄՈՒՀ-երի միջև որակի ապահովմանն առնչվող փորձի փոխանակումն առավել արդյունավետ դարձնելու համար, արձագանքելով շահակիցների կարիքներին, որոշվեց կազմել Որակի ապահովման աջակիցների ցանց: Մշակվել է ցանցի ձևավորման և զարգացման պլանը, որը քննարկվել է Որակի ապահովման աջակիցների խորհրդաժողովում, այնուհետև ուղարկվել է որակի ապահովման ավելի քան 300 փորձագետների: Նրանցից ստացված արձագանքների և առաջարկությունների հիման վրա պլանը լրամշակվել է: Ցանցի մոդելը քննարկվել է նաև 2017թ. փետրվարի 21-ին երիտասարդ դասախոսների համաժողովին: Ցանցի հիմնադրման աշխատանքը մեկնարկեց 2017թ. փետրվարի 23-ին՝ Որակի ապահովման ամփոփիչ համաժողովի ընթացքում:

Ցանցի գործառույթները հետևյալներն են.

- դրական փորձի ձեռքբերում, փոխանակում և տարածում,
- ցանցի բոլոր անդամների ձայնի լսելիության ապահովում,
- միասնական հարթակի ստեղծում,
- ընդհանուր տեսլականի ձևավորում,
- մասնակցության աջակցում և վստահության մթնոլորտի ստեղծում,
- կրթության ոլորտին առնչվող տարաբնույթ խմբերի կամրջում,
- մարդկային ռեսուրսների միավորում:

Գրվել է նաև «Կրթության որակի ապահովման աջակիցների հիմնման հուշագիրը», մշակվել «Կրթության որակի ապահովման աջակիցների ցանցի աշխատանքային ընթացակարգը», որը պետք է քննարկվի ցանցի արդեն գրացված անդամների կողմից:

ՄՈՒՀ-երի միջև փորձի փոխանակման համար 2016 թ բազմաբնույթ միջոցառումներ են կազմակերպվել. կլոր սեղան-քննարկումներ, հանդիպում քոլեջների տնօրենների և որակի ապահովման աջակիցների հետ, այց ՄՈՒՀ-եր, խորհրդատվության և վերապատրաստումների կազմակերպում և այլն:

ՄՈՒՀ-երի միջև փորձի փոխանակման լավ ձև է դարձել տարեվերջյան ամփոփիչ Որակի ապահովման շաբաթը, որը ավանդաբար ավարտվում է որակի ապահովման համաժողովով:

Բուհերը, իսկ այս տարվա առանձնահատկությունը այն էր, որ նաև քոլեջները, մեկ տարվա կտրվածքով հնարավորություն են ստանում ուսումնասիրել միմյանց դրական փորձը, դրա հիման վրա վերանայել սեփական կարիքները, չափել ձեռքերումները, համեմատվելով ոլորտում

Հրապարակվել է ՈԱԱԿ-ի իրականացրած ՀՀ մասնագիտական կրթական համակարգի երկրորդ համակարգային վերլուծությունը, որը հիմնված է ՀՀ տարածքում գործող 24 պետական և 31 ոչ պետական բուհերի, 12 տարածաշրջանային քոլեջների հարցումների արդյունքների վրա:

Ուսումնասիրությունները ապացուցում են, որ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող հավատարմագրման գործընթացները ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում փոփոխությունների իրականացման արտաքին խթան են և նպաստում են դրանց զարգացմանը: Ուսումնական հաստատությունների հետ հարաբերություններում ՈԱԱԿ-ը հանդես է գալիս որպես գործընկեր-խորհրդատու՝ համակարգում որակի մշակույթի ձևավորման և խորացման գործում: Հաստատությունները մեծածավալ աշխատանքներ են իրականացնում իրենց գործունեության տարբեր ոլորտներում որակի ապահովման մեխանիզմների մշակման և գործարկման ուղղությամբ:

ընթացող գործընթացների հետ և, որն ավելի կարևոր է, առաջիկա մարտահրավերների հաշվառմամբ հստակեցնել հաջորդ տարվա անելիքները:

2. ՈԱԱԿ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման մարտահրավերներին և շահակիցների կարիքներին ընդառաջ՝ Հիմնադրամի ռազմավարական գերակայություններից է ՈԱԱԿ-ի, որպես մասնագիտական կրթության ոլորտում որակի արտաքին ապահովում իրականացնող կառույցի, զարգացումը: ՈԱԱԿ-ն անում է ամեն ինչ՝ ունենալու անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներ, իրականացնելու իր հիմնական առաքելությունը, կազմակերպելու շահակիցների կողմից ընդունելի, օբյեկտիվ և անկախ գնահատումներ: Իր գործունեության արդյունավետությունը ցուցադրելուն, կենտրոնի կողմից իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքները թափանցիկ դարձնելուն, շահակիցների հանդեպ և միջազգային ասպարեզում ՈԱԱԿ-ի գործընթացների հաշվետվողականությանն է ուղղված Հիմնադրամի որակի ներքին ապահովման համակարգը:

ՈԱԱԿ-ի նկատմամբ վստահության աճին ուղղված 2016թ.-ին գրանցվել են հետևյալ ձեռքբերումները:

Նպատակ 2.1. Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումները հանրության կողմից ճանաչվում են՝ որպես որակն օբյեկտիվորեն արտացոլող ցուցիչներ:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- գնահատումների արդյունքների վերաբերյալ շահակիցներին ապահովել տեղեկատվությամբ,
- ապահովել հանրության կողմնորոշումը՝ Հիմնադրամի գնահատումների հիման վրա:

ՈԱԱԿ-ն առանձնակի կարևորում է իր գործունեության թափանցիկությունը կրթական հանրության և հաշվետվողականությունը բոլոր շահակիցների առջև: Պարբերաբար կազմակերպվող հանդիպումները, պլանավորվող գործողությունների և մշակվող փաստաթղթերի լայն քննարկումները ոլորտի շահակիցների հետ, գործող չափանիշների, ձևաչափերի, ընթացակարգերի և այլ փաստաթղթերի հասանելիության ապահովումը, տարատեսակ խորհրդատվությունների, վերլուծությունների և հաշվետվությունների հրապարակումը կոչված են նպաստելու հասարակության վստահության ամրապնդմանը մասնագիտական կրթության համակարգի և ՈԱԱԿ գործունեության նկատմամբ:

Հաշվետու տարում գործարկված ՈԱԱԿ-ի նոր կայքէջը, բացի արտաքին ժամանակակից տեսքից և մատչելի կառուցվածքից, նաև նախորդի համեմատ ավելի հարուստ բովանդակություն ունի՝ հանրությանը հասանելի դարձնելով ՈԱԱԿ գործունեությանը վերաբերող ողջ բաց փաստաթղթային բազան և ապահովելով ընթացիկ ռազմավարական ծրագրի հրապարակայնության վերաբերյալ դրույթների իրականացմանը:

Հիմքում ունենալով ՈԱԱԿ 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը՝ կայքի հայերեն և անգլերեն տարբերակներում տարվա ընթացքում շարունակաբար լուսաբանվել են հիմնադրամի արտաքին և ներքին գործընթացները, որը նպատակ ունի ամբողջական և համապարփակ տեղեկատվություն տարածել ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների վերաբերյալ:

Ինչպես նախատեսված է Հավատարմագրման կարգում, ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի կայացրած որոշումներից հետո ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման փորձագիտական զեկույցները, ՈԱԱԿ-ի եզրակացությունները և հավատարմագրում շնորհելու կամ մերժելու մասին Հանձնաժողովի որոշումները հրապարակվել են ՈԱԱԿ-ի կայքէջում և հասանելի են դարձել բոլոր շահակիցների համար: Ներկայումս հրապարակված են 20 ուսումնական հաստատությունների վերաբերյալ փաստաթղթերը: Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն է տրամադրում «Հավատարմագրման պետական գրանցամատյանը»:

Հիմնադրամի գործունեությունը հանրությանը ներկայացնելու նպատակով տարվա ընթացքում ՈԱԱԿ կայքի նորություններ բաժնում կատարվել է 70 հրապարակում և 12 հրապարակում՝ կայքի «Բլոգ» բաժնում, իսկ «Իրադարձություններ» բաժնում 14 սպասվող միջոցառումների մասին հայտարարություն է տեղադրվել: ՈԱԱԿ ֆեյսբուքի պաշտոնական էջում տարվա ընթացքում 204 հրապարակում է կատարվել:

Հաշվետու տարվա ընթացքում զանգվածային լրատվության միջոցներին է ուղարկվել մամուլի 30 հաղորդագրություն, որոնց վերաբերյալ տարվա ընթացքում զանգվածային լրատվության տարբեր միջոցներում եղել է 347 հրապարակում:

Տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի վերաբերյալ անհատական հրապարակումներ են իրականացրել Հանրային, «Ար», «Արմնյուզ», «Շանթ» հեռուստաընկերությունները, «Արմենպրես» լրատվական գործակալությունը, Հանրային և Լրատվական ռադիոկայանները, Orer.am, 1in.am լրատվական կայքերը, «Անկախ» շաբաթաթերթը: Կարևոր է, որ հաշվետու ժամանակահատվածում հիմնադրամի մասին բացասական հրապարակումներ չեն եղել:

ՈԱԱԿ-ը, շահակիցներին հնարավորինս հասու լինելու նպատակով, ներկայացված է մի շարք սոցիալական ցանցերում՝ Facebook, Youtube, Flikcr, Twitter: Ընդ որում, Twitter հաշիվը նախատեսված է միայն անգլալեզու հրապարակումների համար: Անգլալեզու տիրույթում տարածված սոցիալական ցանցում ներկայացված լինելով և կայքի անգլերեն բաժինն ակտիվացնելով՝ փորձ է արվում առավել հասանելի դառնալ միջազգային շահակիցների համար, ինչպես և սահմանված է ներկայիս ռազմավարական ծրագրով:

Ուսումնական հաստատությունների հավատարմագրման նպատակով իրականացված բոլոր գնահատման արդյունքները, համաձայն ընթացակարգի, հրապարակվում են հավատարմագրման հանձնաժողովի որոշման հետ: Բոլոր 20 փորձագիտական զեկույցները հրապարակված են ՈԱԱԿ-ի կայքէջում՝ «Հավատարմագրում» բաժնում:

Զեկույցների ամփոփ տարբերակի առանձին ձևաչափ դեռևս մշակված չէ, սակայն դրան փոխարինում է ՈԱԱԿ-ի եզրակացությունը ուսումնական հաստատության հավատարմագրման վերաբերյալ: Այն պարունակում է համառոտ ակնարկ փորձագիտական գնահատման վերաբերյալ, հաստատության ուժեղ և թույլ կողմերը, փորձագետների խորհրդատվությունները, բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ինտեգրվելու հաստատության հավակնությունների տեսակետից նրա գնահատականը, բարելավման պլանի փորձագիտական գնահատման արդյունքները: Նախատեսվում է զեկույցների բովանդակությունն առավել մատչելի և հակիրճ ներկայացնել ՈԱԱԿ եզրակացության նոր ձևաչափի միջոցով:

Ներկայումս ՈԱԱԿ եզրակացությունները հրապարակվում են Հիմնադրամի կայքէջում՝ հավատարմագրման հանձնաժողովի որոշման և փորձագիտական զեկույցի հետ համատեղ:

ՈԱԱԿ-ի ռազմավարական խնդիրներից էր ընդունելության գործընթացներում դիմորդների կողմից բուհի ընտրության հարցում հավատարմագրման ազդեցության, ընդունելության ցուցանիշների և հավատարմագրման արդյունքների միջև կոռելյացիայի գնահատումը: Հավատարմագրման պետական գրանցամատյանում ներկայացված տեղեկատվությունից զատ, դիմորդների համար նախատեսված հատուկ տարեկան հրապարակումների ձևաչափերը և դիմորդների որոշումների կայացման ազդեցության գնահատման մեթոդաբանությունը դեռևս մշակման փուլում են:

Հիմնադրամի գործունեությունը հանրությանը ներկայացնելու նպատակով ՈԱԱԿ կայքի նորություններ, «Բլոգ» և «Իրադարձություններ» բաժիններում տեղ են գտել 96 հրապարակումներ: ԶԼՄ-ներին է ուղարկվել մամուլի 30 հաղորդագրություն, որոնց վերաբերյալ եղել է 347 հրապարակում:

Բոլոր հավատարմագրումների փորձագիտական զեկույցները, ՈԱԱԿ-ի եզրակացությունները և Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները հրապարակված են ՈԱԱԿ-ի կայքէջում՝ «Հավատարմագրում» բաժնում:

Նպատակ 2.2. ՄՈՒՀ-երը բավարարված են գնահատման արդյունքներով՝ անկախ դրանց դրական կամ բացասական լինելուց:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- վստահելի և ՄՈՒՀ-երի համար ընդունելի փորձագետների հասանելիություն,
- գնահատման արդյունքների բողոքարկման վստահելի մեխանիզմների առկայություն:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գնահատումների նկատմամբ ուսումնական հաստատությունների վստահությունը էապես կախված է փորձագիտական խմբի անդամների մասնագիտական արհեստավարժությունից:

ՈԱԱԿ-ը մշակել է էլեկտրոնային բազայի նոր կառուցվածք՝ պարզեցնելու փորձագետների կողմից իրենց վերաբերյալ տեղեկատվությունը թարմացնելու և ընտրություն կատարելու գործընթացները: Նոր բազան թույլ է տալիս նախապատրաստվել նաև ծրագրային հավատարմագրմանը՝ տեղեկատվություն պարունակելով փորձագետների նեղ մասնագիտական ուղղվածության, կրթական ծրագրերի մշակման կամ գնահատման փորձառության մասին: Նախապատրաստվելով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացներին՝ նույնատիպ էլեկտրոնային բազա է մշակվել նաև ՄԿՈՒ ոլորտի փորձագետների գրանցման համար:

Փորձագետների բազաների ընդլայնման համար հանդիպումներ են տեղի ունեցել հանրապետության և արտերկրի մի շարք բուհերի, ինչպես նաև մասնագիտական միությունների ներկայացուցիչների հետ, որոնք հետագայում համալրում են ՈԱԱԿ-ի տեղացի և միջազգային փորձագետների բազաները: Ներկայումս այդ բազաներում ընդգրկված են շուրջ 400 փորձագետներ:

Ուսանող փորձագետների նախապատրաստման աշխատանքները կազմակերպվում են ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» ցանցի միջոցով, որը համագործակցում է Ուսանողների ազգային ասոցիացիայի, բուհական կառույցների և առանձին ուսանողների հետ: «Ուսանողության ձայնը» սկսել է աշխատանքները նաև քոլեջների հետ՝ նրանց ներկայացուցիչներին ներգրավելով ցանցում:

Կազմակերպվել է երկօրյա դասընթաց միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման համար 24 փորձագետների պատրաստման ուղղությամբ: Հետագայում ՈԱԱԿ փորձագետների համար կազմակերպեցին լրացուցիչ խորհրդատվություններ:

Ինչ վերաբերվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբերում ներգրավված փորձագետների վերապատրաստմանը, թեպետ հատուկ դասընթաց չի եղել, սակայն ՈԱԱԿ-ի համակարգողների աշխատանքը փորձագետների հետ մշտական բնույթ է կրել: Լրացուցիչ վերապատրաստումներ անցկացվել են հավատարմագրման գործընթացներից առաջ:

Փորձագետների բազան համալրվել է վերապատրաստում անցած և գործընթացներին մասնակցած փորձագետներով, ինչպես նաև վերապատրաստված ուսանող-փորձագետներով: Ծրագրային հավատարմագրման և կլաստերային աուդիտի համար անհրաժեշտ փորձագետների պահանջը պլանավորման փուլում է:

Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման մեխանիզմները նախատեսված են հավատարմագրման կարգով և փորձաքննության անցկացման ձեռնարկով: Առանձին ընթացակարգ դեռևս մշակված չէ, քանի որ ներկա փուլում բողոքարկման տրամաբանությունն առանձնահատուկ է՝ պայմանավորված հավատարմագրման առաջին փուլում որոշումների կայացման ժամկետներով: ՈԱԱԿ-ը մշակում է բողոքարկման նոր ընթացակարգ:

Բողոքարկման 2 գործընթացներից մեկում ՄՈՒՀ-ը ետ է վերցրել բողոքարկման դիմումը, իսկ մյուսում որոշում չի կայացվել ՄՈՒՀ-ի հրաժարվելու պատճառով:

Փորձագիտական բազայի համալրման արդյունքում ընդլայնվել են փորձաքննության իրականացման հնարավորությունները. գրեթե բոլոր մասնագիտությունների խմբերի գծով փորձագետներ կան: Գործընթացների ավարտին իրականացված հարցումները ցույց են տվել բավարարվածության բարձր աստիճան. ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների արձագանքն, այդուհանդերձ, վերլուծվել է և հաշվի առնվել թե փորձագետների հետագա ընտրության, թե վերապատրաստումների ժամանակ:

Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման 2 դեպքերում էլ բուհերը բողոքարկման դիմումները ետ են վերցրել՝ մեկը նախնական փուլում, մյուսը՝ լրացուցիչ ուսումնասիրությունների հիման վրա որոշում կայացնելուց առաջ:

Նպատակ 2.3. Հիմնադրամն ապահովում է իր գործունեության անկախությունը:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- գնահատումների անաչառությունը,
- Հիմնադրամի ֆինանսական անկախությունը:

ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող հավատարմագրման նպատակով իրականացվող փորձագիտական գնահատումների անաչառությունը ապահովող ընթացակարգերը վստահելի են շահակիցների և միջազգային փորձագետների համար: Գնահատման մեխանիզմները հստակ ձևակերպված են և կիրառվում են մշակված ընթացակարգերին համապատասխան: Գնահատումների սուբյեկտիվիզմից խուսափելու համար մշակվել են ՈԱԱԿ-ի էթիկայի և բարեվարքության կանոններ, որոնք կարգավորում են գործընթացների բոլոր մասնակիցների՝ անաչառությանն առնչվող վարքագիծը:

Կարևորվել է նաև փորձագետների պատշաճ վարձատրության մակարդակի որոշումը նրանց մոտիվացիայի ապահովման տեսանկյունից: Մշակվել են փորձագետների վարձատրության չափի հիմնավոր և հստակ հաշվարկի մոտեցումներ, որոնք դեռևս քննարկման փուլում են:

Բուհերի ներկայացուցիչների 67 տոկոսը, համաձայն հարցման արդյունքների, վստահ է, որ փորձագիտական զեկույցն արտացոլում է հաստատությունների իրական վիճակը: 33 տոկոսն այդ կարծիքի հետ մասամբ համաձայն չէ, սակայն անհամաձայնությունը վերաբերում է բուհի թույլ կողմերին՝ համաձայնելով զեկույցում նշված ուժեղ կողմերի հետ:

Փորձագետների շահամիտվածությունն արտահայտվել է գործընթացներում կրկին ընդգրկվելու ցանկությամբ՝ պայմանավորված թե վարձատրության, թե ՈԱԱԿ հետ համագործակցելու ցանկության հանգամանքներով:

ՈԱԱԿ-ն ամեն տարի հաշվարկում և ներկայացնում է պահպանման ծախսերը՝ ստանալու պետական ֆինանսավորում: Դիմող ՄՈՒՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքված՝ վճարովի ծառայությունների կատարման պայմանագրի հիման վրա ՄՈՒՀ-ը հոգում է հավատարմագրման գործընթացին առնչվող բոլոր ծախսերը: Արտաքին գնահատման վճարը սահմանվում է ՈԱԱԿ-ի կողմից՝ կախված արտաքին գնահատման բնույթից և տևողությունից, ներգրավված փորձագետների թվից և այլ պայմաններից: Արտաքին գնահատման վճարը հաշվարկվում է ըստ տվյալ դեպքի և հաստատվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից: Իր ֆինանսական

քաղաքականությանը համահունչ՝ ՈԱԱԿ-ը ձգտում է հասնել եկամտի դիվերսիֆիկացիայի ավելի բարձր մակարդակի: Ֆինանսական միջոցների հայթայթման այլ մեխանիզմներն են միջազգային ծրագրերում մասնակցությունը, դասավանդողների և ՄՈՒՀ-երի որակի ապահովման պատասխանատու աշխատակազմի համար վերապատրաստումները, միջին մասնագիտական կրթության հաստատությունների աշխատակազմի համար վերապատրաստումները, վճարովի հիմունքով ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող համաժողովները և այլն:

Ստորև ներկայացվում է եկամտի աղբյուրների բազմազանեցման առաջընթացը.

Եկամտի աղբյուր	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
	մասնաբաժին (%)							
Պետական ֆինանսավորում	97.8	95.9	93.5	88.5	84.7	68.1	48.5	56.6
Հավատարմագրման վճարումներ	2.2	0.7	1.0	6.5	5.4	1.4	35.5	15.2
Վերապատրաստումներ/ խորհրդատվություն	0.0	3.4	3.8	0.0	0.0	2.1	0.6	2.5
Միջազգային ծրագրեր	0.0	0.0	1.7	2.4	9.8	28.4	15.4	25.7
Այլ	0.0	0.0	0.0	2.6	0.2	0.0	0.0	0.0



Պետական բյուջեից ստացվող եկամուտների կշռի նվազման միտումը և եկամուտների դիվերսիֆիկացիայի մակարդակը վկայում են ՈԱԱԿ-ի ֆինանսական անկախության մեծացման մասին:

Նպատակ 2.4. Հիմնադրամն արդյունավետ գործունեություն իրականացնող կայուն կազմակերպություն է:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- կառավարման համակարգի արդյունավետությունը,
- Հիմնադրամն անհրաժեշտ ռեսուրսներով,
- ՈԱ վստահելի ներքին համակարգի առկայությունը:

Մարդկային ռեսուրսների կառավարում

Կազմակերպական կառուցվածքի համաձայն՝ ՈԱԱԿ-ն ունի 3 բաժին (Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության, Քաղաքականության մշակման ու իրականացման, ՈԱԱԿ քարտուղարություն) և վարչական ու օժանդակ կազմ:

ՈԱԱԿ անձնակազմ	Քանակ
1. Տնօրեն	1
2. Գլխավոր մասնագետ/բաժնի ղեկավար	3
3. Ավագ մասնագետ	4
4. Մասնագետ	5
5. Վարչական կազմ	6
6. Օժանդակ կազմ	3
Ընդամենը	22

Տարվա ընթացքում Հիմնադրամը համալրվել է 5 նոր աշխատակիցներով, իսկ աշխատանքից դուրս են եկել՝ 3 աշխատակիցներ, որոնցից 2-ն ուսումը շարունակելու նպատակով:

Հաշվի առնելով, որ որակի ապահովումը ՀՀ-ում զարգացող ոլորտ է, մրցունակ անձնակազմի հավաքագրումը դեռևս մնում է որպես մարտահրավեր: Այդ իսկ պատճառով իր առաքելությունն իրականացնելու, գործունեության որակն ապահովելու նպատակով հաշվետու տարում՝

- նոր ՌԾ-ից ելնելով, վերանայվել և հաստատվել է ՈԱԱԿ մարդկային ռեսուրսների (ՄՌ) կառավարման քաղաքականությունը: ՈԱԱԿ ՄՌ նոր կառավարման քաղաքականությունն իր մեջ ամբողջացնում է նաև անձնակազմի գնահատման և զարգացման, ինչպես նաև կադրերի հավաքագրման և գործընթացների կառավարման համակարգերը,
- վերանայվել են նաև պաշտոնի անձնագրերը և մշակվել նոր՝ առավել ընդգրկուն աշխատանքային նկարագրեր: Աշխատողները ծանոթացել են աշխատանքային նկարագրերին, անցկացվել են քննարկումներ,

Հիմնադրամը, կարևորելով կադրերի մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացումը, 2016թ. նույնպես հնարավորություն է ընձեռել աշխատակիցներին մասնակցելու մի շարք վերապատրաստումների և աշխատաժողովների ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան երկրներում (այդ թվում՝ Ֆրանսիա, Ֆինլանդիա, Էստոնիա, Անգլիա, Գերմանիա, Վրաստան, ԱՄՆ, Ռուսաստան և այլն): ՈԱԱԿ-ի աշխատակիցները վերապատրաստվել են տարբեր թեմաներով՝ կրթական վերջնարդյունքների գնահատում, տարնսազգային կրթության հիմնահարցեր, բուհ-գործատու համագործակցություն, ռազմավարական և կառուցվածքային կառավարում, ֆինանսաների և մարդկային ռեսուրսների կառավարում և այլն:

ՈԱԱԿ-ն իր գործունեության առաջին օրվանից լրջորեն է մոտեցել իր աշխատակազմի մասնագիտացմանը: Ուսումնասիրելով բուհերի ինքնավերլուծությունները, ազգային և միջազգային փորձագետների խորհրդատվությունները, միջազգային միտումներն ու զարգացումները, ինչպես նաև բուհերից հետադարձ կապը՝ ՈԱԱԿ-ը սահմանել է աշխատակազմի մասնագիտացման ուղղությունները: Մասնագիտացման ոլորտները սահմանված են՝ որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների համաձայն: Յուրաքանչյուր աշխատող պատասխանատու է մեկ ուղղության համար, օրինակ՝ կրթական ծրագրեր (ուսանողակենտրոն ուսումնառություն, ուսանողների գնահատում, դասավանդման և

ուսումնառության փորձեր, ուղղահայաց և հորիզոնական համապատասխանություն և այլն), կառավարություն և վարչարարություն, պրոֆեսորադասախոսական կազմ, հետազոտություն և միջազգայնացում, որակի ներքին ապահովում և այլն: Աշխատակազմի պատասխանատու անդամը տվյալ ոլորտում կատարել է հետազոտություն, որի նպատակն է՝

- բացահայտել ոլորտի մարտահրավերներն ու առկա միտումները,
- բացահայտել լավագույն փորձերը և դրանք տարածել ներքին ու արտաքին շահակիցների շրջանում,
- մշակել համապատասխան ուղեցույցներ՝ ուսումնասիրության արդյունքների հիման վրա բարելավելով հավատարմագրման գործընթացը,
- մշակել/վերանայել փորձագետների վերապատրաստման նյութերը:

Ոլորտային ուսումնասիրությունների արդյունքնում՝

- վերհանվել են բուհերի գնահատման համակարգի հիմնախնդիրները, կրթական ծրագրերում առկա բացթողումներն ու մարտահրավերները, բուհերի մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման հիմնահարցերը, տրանսազգային կրթության որակի ապահովման հեռանկարները ՀՀ-ում և այլն,
- կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, դուրս են բերվել լավագույն փորձի օրինակներ և ներկայացվել շահակիցներին,
- վերհանված հիմնահարցերի և լավագույն փորձի հիման վրա, ըստ տիրույթների, մշակվել են ուղենիշեր հավատարմագրման գործընթացն արդյունավետ կազմակեպելու համար,
- լրամշակվել են նաև փորձագետների վերապատրաստման փաթեթները,
- հստակեցվել է կլաստերային հավատարմագրման մեթոդաբանությունը և քննարկվել շահակիցների հետ:

Ընթացիկ տարում պարբերաբար հարցումներ է իրականացվել՝ պարզելու աշխատանքային միջավայրից աշխատակազմի բավարարվածության աստիճանը: Մինչ այժմ անցկացված հարցումների արդյունքները ցույց են տվել, որ աշխատողները հիմնականում բավարարված են աշխատանքային միջավայրով և կարծում են, որ այն արդյունավետ է ու համագործակցային բնույթ է կրում: Հարցման մեջ առանձնացվում են հետևյալ գործոնները.

		2016
1	Աշխատակազմի անդամների անձնական ձեռքբերում	94%
3	Աշխատանքային ծանրաբեռնվածությունը ողջամիտ սահմաններում է	69%
4	Ես բավականաչափ գնահատվում եմ իմ ղեկավարի կողմից	81%
5	Իմ տաղանդը լավ է օգտագործվում աշխատավայրում	94%
7	Ես վստահում եմ տնօրենին	94%
8	Ես ունեմ գիտելիք և փորձ իմ պարտականությունները կատարելու համար	100%
9	Այն մարդիկ, ում հետ աշխատում եմ, համագործակցում են աշխատանքը կատարելու համար	87%
10	Ընդհանուր բավարարվածությունն աշխատանքից	94%

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց են տալիս զարգացման միտումները, վերջին 3 տարիների ընթացքում առկա է բարելավում կառավարման ոլորտում՝ շնորհիվ խորքային վերլուծության, որի իրականացմամբ զբաղվում են ոլորտի որակի պատասխանատուները:

ՈԱԱԿ-ը սահմանել է աշխատակազմի գնահատման համակարգ՝ համոզված լինելու, որ իր աշխատակազմի բոլոր անդամները ներգրավված են հիմնադրամի գործունեության մեջ և հմուտ են իրենց կատարած աշխատանքներում: Հաշվետու տարում մշակվել է «հմտությունների մոդել», որի հիման վրա հիմնադրամի տնօրենը հանդիպել է աշխատողների հետ և իրականացրել նրանց կատարողականի SWOT վերլուծություն: Քննարկման արդյունքները ցույց են տալիս յուրաքանչյուր աշխատողի ուժեղ ու թույլ կողմերը՝ այդ կերպ ուղենշելով վերապատրաստման կարիքները:

ՈԱԱԿ-ի հետ աշխատած միջազգային փորձագետներն ու գործընկերները նշել են. «ՈԱԱԿ-ի մասնագետներն օժտված են մասնագիտական բարձր կարողություններով, որոնք անհրաժեշտ են իրենց հաստատության պլանավորված գործողությունները կատարելու համար: Մասնագիտական կարողությունների վերաբերյալ պետք է նշել, որ դրանք համահունչ են հավատարմագրման գործընթացների ու նախագծերի իրականացման տեսանկյունից: Նյութական ռեսուրսների բաշխման տեսանկյունից նույնպես դրանք համապատասխան են»:

Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարում

Բոլոր սենյակներում առկա են լավ սարքավորումներ և համապատասխան հարմարություններ՝ առօրյա աշխատանքային արդյունավետ գործունեություն ծավալելու համար (բաժինների առօյա աշխատանքների, հավատարմագրման գործընթացների կազմակերպման, միջազգային փորձագետներին առցանց ներգրավելու, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների առցանց ներկայությունն ապահովելու (երկրից բացակայելու դեպքում), բուհերի ներկայացուցիչների և ՈԱԱԿ աշխատակիցների հեռավար վերապատրաստումներ, տարատեսակ հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար): ՈԱԱԿ-ի ջանքերով և եվրոպական աջակցման ծրագրերի միջոցով սարքավորումներն արդիականացվեցին, և ներդրվեցին ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ կառավարման գործընթացում: ՈԱԱԿ-ն ունի իր գրադարանը և DocFlow թվային համակարգը, որի միջոցով էլ ՈԱԱԿ-ը պահում է իր գրադարանային ռեսուրսներն ու բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև էլեկտրոնային ձևով կառավարում է հավատարմագրման գործընթացը:

ՈԱԱԿ-ի ռազմավարական ծրագրի և որակի արտաքին գնահատման ռեսուրսների արդյունավետ կառավարման տեսանկյունից նյութական ռեսուրսները գնահատելու համար տարին մեկ կամ երկու անգամ իրականացվում են հարցումներ ՈԱԱԿ-ի աշխատակազմի անդամների շրջանում, և յուրաքանչյուր հավատարմագրման գործընթացից հետո մեկ անգամ փորձագետների շրջանում:

Ըստ հարցումների արդյունքների՝ աշխատողներն ընդհանուր առմամբ բավարարված են սարքավորումներով և աշխատանքային պայմաններով (2016 թ.՝ 87%): Նրանք գտնում են, որ ՈԱԱԿ-ն ունի տեխնիկական և ֆիզիկական անհրաժեշտ հնարավորություններ՝ իր որակի արտաքին գնահատման գործընթացներն ու այլ գործողությունները կազմակերպելու և դրանք արդյունավետ կերպով իրականացնելու համար: Ինչ վերաբերում է համակարգչային ծրագրերի որակին և քանակին, աշխատողների 100%-ը բավարարված է համակարգչային ծրագրերի արագությունից, որն անհրաժեշտ է աշխատանքային գործունեության արդյունավետությունն ապահովելու համար: ՈԱԱԿ-ի ներքին գործընթացների ավտոմատացման համակարգի՝ Docflow-ի վերաբերյալ պետք է նշել, որ ըստ անցկացված հարցման՝ աշխատողների 92%-ը բավարարված են եղել Docflow համակարգում առկա տեղեկատվությամբ: Տեղեկատվության որոնմանն ու օգտագործմանը, ինչպես նաև բոլոր ծրագրերի անվտանգության ապահովմանն առնչվող քաղաքականություններն ու ընթացակարգերը սահմանված են SS-ին և ռեսուրսներին վերաբերող պրոտոկոլներում:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների պարբերական գնահատում

Հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավման նպատակով մշտապես կատարվում է իրականացված գործընթացների արդյունավետության վերլուծություն: Վերջինս հնարավորություն է տալիս բացահայտել գործընթացի փաստացի վիճակը, ուժեղ կողմերը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու ողջ գործընթացը: 2015 թվականին իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատումն ու վերլուծությունն իրականացնելու նպատակով ըստ հավատարմագրման գործընթացի առանձին փուլերի (ինքնավերլուծություն, նախնական գնահատման գործընթաց, փորձագիտական այց, փորձագիտական զեկույց) անցկացվել է անանուն հարցում հավատարմագրված բուհերի և տեղացի ու միջազգային փորձագետների շրջանում: Հավատարմագրման գործընթացի արդյունավետության գնահատումն ըստ փուլերի ներկայացված է ստորև.

1. Ինքնավերլուծության գործընթաց (100 %),
2. Նախնական գնահատման գործընթաց (98 %),
3. Փորձագիտական այց (100%),
4. Փորձագիտական զեկույց (90 %):

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև ՈԱԱԿ-ի կողմից փորձագետներին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին (օրենսդրական, նորմատիվ փաստաթղթեր, ունենիշներ, ձևաչափեր և այլն), թե տրամադրված փաստաթղթերն որքանո՞վ են բավարար արդյունավետ փորձաքննություն իրականացնելու համար: Փորձագետների 89% բավարար է գանահատել փորձագետին տրամադրվող փաթեթի արդյունավետությունը:

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև փաստաթղթերի նախնական ուսումնասիրման գործընթացի արդյունավետությանը, որը դիտարկվել է ըստ հետևյալ խնդիրների՝

- ընդհանուր պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի վերաբերյալ (100%),
- դուրս բերել հիմնախնդիրներ/հարցեր փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով (100%),
- պատրաստել փորձագիտական զեկույց (91%):

Հիմք ընդունելով ստացված տվյալները՝ կարելի է փաստել, որ նախնական գնահատման գործընթացն արդյունավետ է կազմակերպվում: Փորձաքննության այս փուլը ծառայում է իր նպատակին, փորձագետները կարողանում են հաստատության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել ուժեղ և թույլ կողմերը:

Փորձագետները գնահատել են նաև փորձագիտական այցի արդյունավետությունը և թե որքանով են փորձագետների առջև դրված նպատակներն իրականացվել: Ուսումնասիրվել է իրականացված այցերի արդյունավետությունը (100%), հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը տեղեկատվություն ստանալու տեսանկյունից (86%), հաստատության կողմից լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը (93%): Անդրադարձ է կատարվել նաև հանդիպումների օպտիմալ տևողությանը (45-60 րոպե): Փորձագետները գնահատել են նաև փորձագիտական զեկույցի ձևաչափը և դրա օգտակարությանը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետների 86% բավարարված է փորձագիտական խմբի զեկույցի ձևաչափով:

Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում

Նորմատիվային ակտերում տեղի ունեցած փոփոխությունների, արտաքին և ներքին գործընթացների պարբերական գնահատման, հավատարմագրման գործընթացի արդյունավետության վերլուծության, ինչպես նաև Հավատարմագրման հանձնաժողովի, տեղացի

և միջազգային փորձագետների արձագանքների հիման վրա վերանայվել ու լրամշակվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր:
2016 թվականին մշակվել, վերանայվել կամ հաստատվել է.

1. կլաստերային աուդիտի շրջանակը, չափանիշներն ու մեթոդաբանությունը և քննարկվել համապատասխան շահակիցների հետ,
2. հավատարմագրման գործընթացը կանոնակարգող հետևյալ փաստաթղթերը և ձևաչափերը՝
   - ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը (հայերեն և անգլերեն լեզուներով)՝
     - տրանսազգային կրթություն իրականացնող հաստատությունների համար,
     - միջին մասնագիտական կրթության համակարգի հաստատությունների համար,
   - հավատարմագրման փաթեթում ընդգրկվող փաստաթղթերի ցանկը,
   - համակարգողի փաթեթը,
   - ՈԱԱԿ-ի եզրակացության ձևաչափը,
   - փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի իրականացման հաշվետվության ուսումնասիրման շրջանակը,
   - հավատարմագրված բուհերում մշտադիտարկման կազմակերպման մեթոդաբանությունն ու ձևաչափը:

3. 2016 թվականին վերջնականացվել և հաստատվել է ՈԱԱԿ-ի **2016-2020 թվականների Ռազմավարական ծրագիրը: Որոշվել են ՈԱԱԿ-ի** ռազմավարական ուղղությունները առաջիկա հինգ տարիների համար, մշակվել և հաստատվել է ՌԾ գործողությունների պլանը:

Ընդհանրացնելով ՈԱԱԿ-ի կողմից իրականացված վերլուծությունների արդյունքները և փորձագետների դիտարկումները՝ կարելի է փաստել, որ կրթական համակարգի բարելավման և զարգացման գործում հավատարմագրման գործընթացի ազդեցությունը զգալի է:

Հաստատությունները հավատարմագրման գործընթացը համարում են արդյունավետ գործիք իրենց գործունեությունը կանոնակարգելու և հստակեցնելու տեսանկյունից: Փորձագիտական զեկույցները կարևոր դեր են խաղում բուհի թույլ, ուժեղ կողմերը և մատահրավերները բացահայտելու տեսանկյունից:

Տեղացի և միջազգային փորձագետների կարծիքով ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հավատարմագրման գործընթացները կազմակերպվել են բարձր պրոֆեսիոնալիզմով. միջազգային փորձագետները մասնավորապես գոհունակություն են հայտնել փորձագիտական խմբի ղեկավարների, համակարգողների պատրաստվածության վերաբերյալ:

3. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Հիմնադրվելու առաջին իսկ օրվանից ՈԱԱԿ-ն ակտիվ քայլեր է ձեռնարկել իր գործունեությունը միջազգայնացնելու և միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով ՀՀ մասնագիտական կրթության դիրքերի ամրապնդմանը միջազգային մակարդակում:

Նպատակ 3.1. Հիմնադրամն անդամակցում է միջազգային ճանաչում ապահովող կառույցներին, մասնակցում ծրագրերին:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

– ապահովել Հիմնադրամի անդամակցությունը միջազգային ճանաչում ունեցող կառույցներին:

ՈԱԱԿ-ի միջազգայնացմանն ուղղված քայլերը 2016թ. շարունակվել են հետևյալ գործընթացների շուրջ.

- ՈԱԱԿ-ը դարձել է ԱՄՆ բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի (CHEA) Որակի ապահովման միջազգային խմբի անդամ,
- ՈԱԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել INQAAHE, ENQA միջազգային ցանցերի զարգացումներին, մասնակցել է ENQA աշխատանքային խմբերում, ներկայացված է INQAAHE-ի կառավարման խորհրդում:
- Ակտիվ համագործակցում է Եվրամիության և նախկին Խորհրդային միության երկրների որակի արտաքին ապահովման գործակալությունների հետ: Համագործակցության հուշագիր է կնքվել Ռուսաստանի Դաշնության որակի ապահովման գործակալության հետ:
- Միջազգային ծրագրերի (ՏԵՄՊՈՒՍ) շրջանակներում ՈԱԱԿ-ի անձնակազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք վերապատրաստումների, ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Վերապատրաստումների արդյունքում ՈԱԱԿ-ում ձևավորվել է համապատասխան ներուժ, որը նպաստում է հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը:
- ՈԱԱԿ-ը, որպես ղեկավար/համակարգող գործընկեր հաստատություն, ակտիվորեն մասնակցել է ՏԵՄՊՈՒՍ-ի 11 ծրագրերում: Ծրագրերը միտված են մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանը, որակի ապահովման համակարգի ամրապնդմանը՝ անդրադառնալով համակարգում գոյություն ունեցող խնդիրներին:

Իրականացված հավատարմագրման արդյունքները միջազգային մակարդակով ճանաչելի դարձնելու, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգի նկատմամբ միջազգային Հիմնադրամների վստահությունը բարձրացնելու նպատակով, ՈԱԱԿ-ը 2016թ.-ին անցել է արտաքին գնահատում՝ միտված Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամակցությանն և Որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (EQAR) գրանցվելուն: ENQA-ի կողմից արտաքին գնահատումը հավաստեց՝ որքանով են իրականացվող գործընթացները համապատասխանում Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ESG) պահանջներին՝ ինչպես ՀՀ-ում որակի արտաքին ապահովման գործընթացների կազմակերպման, այնպես էլ ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման տեսանկյունից: Արտաքին գնահատման արդյունքում ՈԱԱԿ-ը դարձել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամ (2017թ.-ի փետրվարի 13-14-ի նիստի որոշմամբ):

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի կողմից իրականացվող արտաքին գնահատումը սկսվել է Հիմնադրամի կողմից ինքնավերլուծության իրականացումից: Մասնավորապես՝ ինքնավերլուծության շրջանակներում իրականցվել են՝

- տվյալների հավաքագրում, ընդհանրացում և վերլուծություն,
- փաստաթղթային հենքի վերջնականացում և թարգմանություն,
- պարբերաբար հանդիպում-քննարկումներ տարբեր շահակիցների հետ,
- շահակիցների հետ չափանիշ առ չափանիշ ինքնավերլուծության տեքստի քննարկում,
- շահակիցների հետադարձ կապի հիման վրա ինքնավերլուծության վերջնական զեկույցի ընդհանրացում (ինքնավերլուծության զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ հետադարձ կապ են տրամադրել նաև միջազգային փորձագետները):

Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի կողմից արտաքին գնահատումից առաջ ՈԱԱԿ-ը նախնական արտաքին գնահատում է անցել Twinning ծրագրի շրջանակներում: Իրականացվել է նախնական փորձագիտական այց, տրամադրվել է

փորձագիտական զեկույց դիտարկումներով և խորհրդատվություններով: Զեկույցում նշված դիտարկումները հաշվի են առնվել վերջնական զեկույցի պատրաստման ժամանակ:

Ինքավերլուծության հանձնումից հետո իրականացվել է փորձագիտական այց, որի հիման վրա պատրաստվել է փորձագիտական եզրակացություն, ներկայացվել կառույցին և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի խորհրդին՝ որոշման կայացման համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցությունից զատ, 2017թ.-ի ՈԱԱԿ-ի առաջնահերթություններից է համարվում Որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (EQAR) գրանցումը: Գործընթացը մեկնարկել է, գրանցման մասին որոշման կայացումը նախատեսված է 2017թ-ի հուլիսին:

2016թ. ՈԱԱԿ-ը դարձել է ԱՄՆ բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի (CHEA) Որակի ապահովման միջազգային խմբի անդամ:

2017թ.-ից ՈԱԱԿ-ն, արտաքին գնահատում անցնելուց հետո, դարձել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ:

Համաձայն միջազգային փորձագետների կարծիքի՝ ՈԱԱԿ-ը լիովին տիրապետում է ոլորտի արդի հիմնախնդիրներին, կարողացել է ստեղծել անհրաժեշտ պայմաններ որակի մշակույթի ձևավորման համար և ունի համապատասխան փաստաթղթային հենք և մարդկային ռեսուրսներ Որակի ապահովման եվրոպական ասոցիացիային լիիրավ անդամակցության համար:

Նպատակ 3.2. Հիմնադրամն իրականացրել է ՄՈՒՀ-երի գնահատում արտերկրում և իր մատուցած ծառայությունների որակով չի զիջում նմանատիպ եվրոպական գործակալություններին:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- ձևավորել պահանջարկ Հիմնադրամի ծառայությունների նկատմամբ և սկսել օտարերկրյա մուհերի գնահատում,
- իրականացնել համատեղ գնահատումներ միջազգային ճանաչում ունեցող այլ կառույցների հետ:

Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամակցությունը ՈԱԱԿ-ը պլանավորում է օգտագործել օտարերկրյա մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրում իրականացնելու համար: Ներկայումս ուսումնասիրվում է համանման կառույցների միջազգային հավատարմագրման փորձը և մշակման փուլում է գործընթացը համակարգող փաստաթղթերի փաթեթը. օտարերկրյա ՄՈՒՀ-երի հավատարմագրման ընթացակարգը, գնային քաղաքականությունը, փորձագետների ներգրավման կարգը և այլն:

Ռազմավարական մյուս խնդիրն է հավատարմագրման այլ կառույցների հետ համատեղ գնահատումների իրականացումը: ՈԱԱԿ-ն ունի ծրագրային հավատարմագրման նպատակով համատեղ գնահատման փորձառություն Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIIN) հետ: 2017թ. ՏԵՄՊՈՒՍԻ GOVERN ծրագրի շրջանակներում Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում նույն կազմակերպության հետ կիրականացվի համատեղ գնահատում ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով:

Օտարերկրյա ՄՈՒՀ-երի հավատարմագրման ընթացակարգը, գնային քաղաքականությունը և փորձագետների ներգրավման կարգը մշակման փուլում են:

2017թ. ASIIN-ի հետ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում կիրականացվի համատեղ գնահատում ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով:

4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ՈԱԱԿ-ի համար արդեն ավանդույթ է դարձել աշխատանքային տարին եզրափակել Որակի շաբաթով և ամփոփիչ համաժողովի ընթացքում սահմանել կրթական համակարգի զարգացման միտումները, քննարկել առկա մարտահրավերները: Այդ նպատակով էր կազմակերպվել «Որակը լսարանում՝ գնահատման համակարգի բարելավում» թեմայով որակի ապահովման չորրորդ ֆորումը, որը տեղի ունեցավ 2017 թ. փետրվարի 23-24-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում: Ֆորումի մասնակիցներն էին տարբեր ՄՈՒՀ-երի կրթության կառավարիչներ և դասախոսներ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Բելգիայից, Շվեյցարիայից, Իռլանդիայից, Մեծ Բրիտանիայից, ինչպես նաև գործատուներ և ուսանողներ: Ֆորումի աշխատանքներին ներգրավվել էին հանրապետության ՄՈՒՀ-երի 25 տոկոսը և ոլորտի բոլոր խոշոր դերակատարները:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում վեր են հանվել մասնագիտական կրթական համակարգի հետևյալ կարիքները.

- Ուսումնական հաստատությունների ռազմավարական կառավարման անհրաժեշտություն. բուհերի մի մասը հենց ինստիտուցիոնալ հավատարմագրման փուլում ստեղծեց իր ռազմավարական ծրագիրը,
- Բուհերի ադմինիստրատիվ կառույցների պարզեցում և օպտիմալացում,
- Մասնագիտական և կրթական դաշտերի միջև խզվածության վերացում, աշխատաշուկայի կարիքներին համապատասխան ՄԿԾ-ների վերջնարդյունքահեն մոտեցման ապահովում,
- Դասախոսական կազմի ընտրության քաղաքականության արդյունավետության բարձրացում,
- Ուսանողների գնահատման քաղաքականության վերանայում մի քանի տեսանկյուններից՝ ուսանողի առաջընթացի, բուհ-գործատու կարիքների, ինքնուրույն և թիմային աշխատանքների, գործնական խնդիրներ լուծելու, ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման,
- Կրթության ոլորտում հետազոտահեն մոտեցման ներդնում,
- Ուսումնական միջավայրի ռեսուրսային բազայի զարգացում՝ օգտագործելով վիրտուալ հնարավորությունները,
- Որակի ամբողջական կառավարման ՊԻՍԲ շրջափուլի հետևողական կիրառում բոլոր գործընթացների համար:

Մասնագիտական կրթության համակարգի զարգացման միտումներն են.

- Բարձրագույն մակարդակով հայտարարվել է, որ Հայաստանի մասնագիտական կրթական համակարգը կարող է զարգանալ միայն մեծ քաղաքակրթական դաշտերում:

- Կրթության որակի ապահովման գործընթացում բուհերը հասել են ծրագրային հավատարմագրման շրջափուլին. ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլը հաջողությամբ է իրականացվել:

- ՈԱԱԿ-ը և բուհերը քննարկումների արդյունքում համաձայնել են, որ մինչ ծրագրային հավատարմագրման շրջափուլի մեկնարկը նպատակահարմար է իրականացնել ծրագրերի խմբային աուդիտ: Այն կնախապատրաստի բուհերին ծրագրային հավատարմագրմանը, կնպաստի մասնագիտությունների խոշորացմանը և ծրագրերի որակի բարձրացմանը կարճ ժամանակահատվածում:

- Թե բուհերը, թե ԿԳ նախարարությունն ընդունում են բուհերի բյուջեների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը. 90 տոկոսով կախվածությունը ուսանողների վարձավճարներից բացասաբար է ազդում կրթության կազմակերպման որակի վրա:

- Ոլորտի շահակիցները համակարծիք են, որ ՀՀ ապագան և կառավարության հռչակած ներդրումային քաղաքականության հաջողությունը կախված են մասնագիտական կրթության որակի ապահովումից:

- Բոլոր շահակիցները նաև գիտակցում են, որ վերոնշյալներն ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ որակյալ հանրակրթություն:

Հաշվի առնելով վերոնշյալ միտումները՝ ֆորումի ընթացքում ընդգծվեցին հանրապետության կրթության ոլորտի առջև ծառացած հետևյալ մարտահրավերները.

- Կրթության ոլորտի «էկոհամակարգի» զարգացում՝ որակական և քանակական հստակ չափանիշների ապահովմամբ,
- Ավելի մեծ ուշադրություն բարձրագույն կրթության որակին. ժամանակակից աշխարհում կարող է մրցունակ լինել միայն այն երկիրը, որի բնակչության մեծ մասն ունի բարձրագույն կրթություն,
- Բուհերի կառավարման խորհուրդների դերակատարման վերանայում,
- Կառավարման գործառույթների մի մասի փոխանցում ֆակուլտետներին՝ նպաստելով վերջիններիս ինքնուրույնության աճին,
- Բուհերում վարչական աշխատակազմի և դասախոսական կազմի հարաբերակցության փոփոխում հօգուտ վերջինիս,
- Բակալավրական և մագիստրոսական կրթությունների համապատասխանեցում ՈԱՇ-ին,

- Բուհերի դասախոսական կազմի դիվերսիֆիկացում՝ ակադեմիական հանրության ներկայացուցիչների, հետազոտողների, գործատուների, պրակտիկ աշխատողների ներգրավմամբ, սփյուռքի և հայրենիքի տաղանդների ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ (ներառելով արտերկրում կրթություն ստացած, դասավանդող կամ հետազոտող առաջնակարգ մասնագետներին),
- Դասավանդման և ուսումնառության որակի ազգային հարցախույզային համակարգի ներդրում,
- Ագլերենի հետևողական ներմուծում կրթական և հետազոտական համակարգեր,
- Անհանդուժողության ձևավորում գրագողության նկատմամբ,
- Գնահատման չափանիշների և ընթացակարգերի հստակեցում, ուսանողի առաջընթացի գնահատման ապահովում,
- Ուսանողի իրական ծանրաբեռնվածության հաշվարկի հիման վրա կրեդիտների բաշխման և հատկացման գործընթացների հստակեցում,
- Պետական մակարդակով պրակտիկայի դերի վերանայում: